ՀՐԱՉ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանի սան

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՎ ՎԱՆՔԵՐԸ

Ս. Ստեփանոս Նախավկա: Նվիրական անուն, որը միշտ պարծանքով է հնչում քրիստոնյա հավատացյալի շուրթերին: Նվիրական անձ, որի վարքը և գործունեությունը օրինակ է հանդիսացել Քրիստոնեական Եկեղեցու համար: Քրիստոնյա նահատակ, որը անցել է Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու սրբերի կարգը, որն ունի հիշատակության իր առանձին օրը, ըստ Տոնացույցի: Հայ Առաքելական Եկեղեցին անմասն չի այս ամենից և սահմանել է մի առանձին օր նրա խնկելի հիշատակը փառաբանելու և օրհներգելու համար: Ըստ մեր Եկեղեցու Տոնացույցի, դեկտեմբեր ամսվա վերջին օրերին նշվում են չորս Ավագ տոները, որոնցից մեկն էլ Ս. Ստեփանոս Նախավկայի տոնն է: Այդ օրվա շարականները նվիրված են Ս. Ստեփանոսին և լի են Գործք Առաքելոցում Ս. Ստեփանոսի հետ կապված իրադարձությունների մեկնաբանությամբ և փառաբանական մակդիրներով:.

Ս. Ստեփանոս Նախավկան մեր Եկեղեցու չորս գլխավոր բարեխոսներից է, որի արտահայտություններից մեկն է նրա անունը հավերժացնող այն բազում վանքերը, եկեղեցիները, որոնք գտնվում են պատմական Հայաստանի ողջ տարածքում: Մեր այս հոդվածում փորձել ենք ներկայացնել Ս. Ստեփանոս Նախավկայի անունը կրող վանքերը և եկեղեցիները հետևյալ խմբավորումով՝ առանց հավակնություն ունենալու կատարել ամբողջական թվարկումը Ս. Ստեփանոսին նվիրված բոլոր կառույցների:

1. Վանական համալիրներում առանձին մաս կազմող Ս. Ստեփանոս Նախավկայի անունը կրող եկեղեցիները:

ա. Հաղարծինի Ս. Ստեփանոս եկեղեցի

Հայ ճարտարապետության ամենահին հուշարձաններից է Հաղարծնի վանական համալիրը: Այն կազմված է հինգ եկեղեցիներից, որոնցից մեկն էլ կրում է Ս. Ստեփանոս Նախավկայի անունը: Ս. Ստեփանոսի եկեղեցին գտնվում է համալրի արևելյան կողմում: Կառուցման ժամանակը ստույգ հայտնի չի, ըստ ճարտարապետական ոճի, ենթադրվում է, որ պիտի կառուցված լինի 11-12-րդ դարերում: Եկեղեցու պատերը զանդակված են զարդանախշերով, իսկ վիմական արձանագրությունները որոշակի պատկերացում են տալիս այդ եկեղեցու

պատմության մասին: Արձանագրություններից մեկն էլ վկայում է, որ այն վերանորոգվել է 1651 թվականին:

բ. Թանահատի Ս. Ստեփանոս եկեղեցի

Հաջորդ Ս. Ստեփանոս եկեղեցին մասն է կազմում Եղեգնաձորում գտնվող Թանահատի վանական համալիրի: Այս համալիրի մեջ, բացի Ս. Ստեփանոս եկեղեցուց, մտնում է նաև Ս. Նշան կամ Ս. Վարագա Ս. Խաչ եկեղեցին:

Գլխավոր եկեղեցին մատենագրական աղբյուրներում և արձանագրություններում կոչվում է Ս. Ստեփանոս Նախավկայի անունով: Կառուցման թվականը հստակ հայտնի չէ:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի տեղեկության, Հայ Եկեղեցու 7-րդ դարի նշանավոր անձերից մեկը՝ Ստեփանոս Սյունեցին, մահացել է 735 թվականին և թաղվել Արկազ գյուղում: Նույն աղբյուրը հայտնում է, որ Ստեփանոսի տապանը երկար չի մնում Արկազում, այլ նույն թվականին տեղափոխվում է Թանահատի Ս. Ստեփանոս եկեղեցի, որը սկզբնական շրջանում մի փոքր մատուռ է եղել, որի տեղում հետագայում, 1273-1279 թվականներին, Պռոշ իշխանը կառուցում է գմբեթավոր մի եկեղեցի: Այստեղից եզրակացնում ենք, որ Թանահատի վանքը, իր անբաժան մասը կազմող Ս. Ստեփանոսի եկեղեցու հետ միասին, գոյություն է ունեցել դեռևս 8-րդ դարի առաջին քառորդում: Ս. Ստեփանոսի եկեղեցին այժմ գտնվում է կիսավեր վիճակում: Պատերի վրա պահպանվել են արևի ժամացույցը և թռչունների բարձրաքանդակ: Եկեղեցին հարուստ է նաև արձանագրություններով: Դրանք այնպիսի նյութեր են պարունակում իրենց մեջ, ինչպիսիք են միաբանության համալրումը նոր հոգևորականներով, Թանահատի վանքին կալվածքների նվիրատվությունը մեծանուն իշխանների կողմից: Այս արձանագրությունները մեծ չափով օգնում են որոշակի պատկերացում կազմել վանքի պատմության և ներքին կյանքի վերաբերյալ:

գ. Էմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցին

Արթիկից շուրջ մեկ կիլոմետր հեռավորության վրա է գտնվում Էմբատավանքը, որից այժմ կանգուն վիճակում պահպանվել է միայն Ս. Ստեփանոս եկեղեցին:

Պետք է ասել, որ պատմիչները ոչ մի հիշատակություն չեն թողել այս վանքի մասին, հայտնի չէ, թե երբ է կառուցվել և ում ձեռքով: Եղած տեղեկությունների եկեղեցու վրա կատարված արձանագրություններն են:

Իր ճարտարապետական կառուցվածքով, ոճով Ս. Ստեփանոսի եկեղեցին համապատասխանում է 7-րդ դարի վանքերի ոճին: 7-րդ դարում կառուցվելու հանգամանքը ենթադրում է, որ այն կառուցել են Կամսարականները, որոնց սեփականությունն էր Ծիրակը:

Ինչ վերաբերում է արձանագրություններին, ապա դրանցից ամենահինը գրվել է 11-րդ դարում: Դրանից իմանում ենք, որ Ս Ստեփանոսի եկեղեցին ենթարկվել է սելջուկների ավարառությանը, իսկ մինչ այդ պատկանել է Պահլավունիներին: Այստեղ հիշատակված Բարսեղը, որը վանքի վանահայրն էր, ենթադրվում է, որ Վահրամ Պահլավունու որդիներից մեկն է:

Սեղջուկների Ծիրակը ազատագրելուց հետո Լմբատավանքը Ս. Ստեփանոսի եկեղեցու հետ ընկիրվում է Զաքարյան իշխաններին. Ծիրակի գավառի հետ միասին: Այդ մասին են վկայում 13-րդ դարի արձանագրությունները: Ս. Ստեփանոսի եկեղեցում կատարվել են վերանորոգումներ 13-րդ դարում, ամենայն հավանականությամբ Զաքարյան իշխանների կողմից: Այդ ընթացքում եկեղեցու հարավային և հյուսիսային պատերին կից ավելացվել են փոքրիկ խորան-մատուռներ: Սա պայմանավորված է նրանով, որ, ըստ արձանագրություններից մեկի, 13-րդ դարի սկզբին Բաշտկա թոռներ Գրիգորը և Մովսեսը վանքին են ընկիրում Սառնաղբյուր գյուղը, որի դիմաց միաբանությունը խոստանում է նրանց հիշատակին ամեն տարի երկու խորաններում Պատարագ մատուցել:

Ս. Ստեփանոսի եկեղեցու վերջին արձանագրությունը կատարվել է 1251 թվականին, ըստ որի կալվածքներ են ընկիրաբերվել վանքին: Սրանից եզրակացնում ենք, որ դեռևս 13-րդ դարի կեսերին Լմբատավանքը Ս. Ստեփանոս եկեղեցու հետ միասին կանգուն էր: Դրանից հետո, այս վանքի մասին պատմությունը լռում է:

դ. Գնդեվանքի Ս. Ստեփանոս եկեղեցի

Գնդեվանքի վանական համալիրը կառուցվել է 10-րդ դարում 936 թվականին: Վանքի հիմնադրման մասին այսպես է արտահայտվել Սյունյաց Սոփիա իշխանուհին. «Անակ մատանի էր Վայոց ձորը, ես շինեցի սա և իբրև ակ դրեցի վրան»:

Վանքի Ս. Ստեփանոս եկեղեցին կրկնում է Ս. Հռիփսիմեի տաճարի տիպը և հենց այդ ոճն էլ բարձրացնում է վանքի համալիրի տեսքը և նշանակությունը: Իրապես Գնդեվանքը, Ս. Ստեփանոս եկեղեցու հետ միասին, հանդիսանում է 10-րդ դարի Սյունիքի կարևորագույն հուշարձաններից մեկը:

ե. Խծկոնքի Ս. Ստեփանոս եկեղեցի

Խծկոնքի վանական համալիրը բաղկացած է հինգ եկեղեցիներից՝ Ս. Աստվածածին, Ս. Կարապետ, Ս. Լուսավորիչ և Ս. Ստեփանոս: Այս եկեղեցիներից միայն Ս. Սարգսի շինարարության թվականն է հայտնի՝ 12-13 դարեր, մյուսների մասին պատմական տեղեկություններ ստանում ենք արձանագրություններից: Այս հինգ եկեղեցիներից միայն Ս. Ստեփանոսը ունի ավանդատներ և իր ճարտարապետական ոճով տարբերվում է մյուսներից:

2. Ս. Ստեփանոս Նախավկայի անունը կրող վանական համալիրներ

ա. Աղջոց Ս. Ստեփանոսի վանք

Աղջոց Ս. Ստեփանոս վանքը գտնվում է Գեղարդավանքի մոտ: Վանքի հիմնադրումը կապվում է Հռիփսիմյանց կույսերի պատմության հետ և Ս. Ստեփանոս է կոչվել այնտեղ նույնանուն հոգևորականի թաղման հետ կապված: Վանքը կառուցվել է 13-րդ դարում: Ս. Ստեփանոսի վանական համալիրը բաղկացած է գլխավոր եկեղեցուց, ժամատնից և Պողոս-Պետրոս եկեղեցուց:

բ. Դարաշամբի (Մաղարդի) Ս. Ստեփանոս Նախավկայի վանք

Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը գտնվում է Ջուղայից 15 կմ արևմուտք, Մաղարդ սարալանջին, Դարաշամբ կոչվող գյուղի մոտ: Այն ժամանակի ընթացքում հայտնի է եղել որպես ճարտարապետական բարձր ոճի հուշարձանների համալիր ու հանդիսացել է հայ ժողովրդի ամենանվիրական ուխտավայրերից մեկը:

Ըստ արձանագրությունների, Դարաշամբի վանքը կառուցվել է 1643 թվականին և ավարտվել 1655-ին, շարունակվելով մինչև 1680 թվականը: Շինարարությունը կատարվել է Հակոբ Ջուղայեցի վարդապետի (հետագայում՝ կաթողիկոս) օրոք, ոմն Ավետիքի նվիրատվությամբ: Ժամանակի ընթացքում վանքը մի քանի անգամ վերանորոգվել է: Ըստ արձանագրություններից մեկի, այս վերանորոգումներից մեկը կատարվել է 1865 թվականին: Վանքի համալիրը կազմված է գլխավոր եկեղեցուց, երկու փոքր-կից եկեղեցիներից և մի զանգակատնից:

Դարաշամբի Ս. Ստեփանոս վանքը, բացի նվիրական ուխտատեղի լինելուց, եղել է նաև մեր մշակույթի օջախներից մեկը, ունեցել է հարուստ ձեռագրատուն և կրթական բարձր մակարդակի վրա դրված վանական դպրոց:

գ. Աստապատի Ս. Ստեփանոս վանք

Աստապատի Ս. Ստեփանոս (հայտնի է նաև Կարմիր վանք, Քարատակի վանք) վանական համալիրը գտնվում է Նախիջևանից հարավ, Արաքսի ձախակողմյան մասում: Այն հանգամանքը, որ վանքի անունը հիշատակվում է Խաչիկ Ս. Արշարունի Կաթողիկոսի 976 թվականի թղթում և տեղի խաչքարերն էլ ունեն 1277, 1471, 1477 թվականները, ենթադրել են տալիս, որ վանքը հիմնվել է վաղ միջնադարում: Ավերվելով 17-րդ դարում Շահ-Աբասի արշավանքներից, վանքը մի քանի անգամ վերաշինվել է: Հիմնական վերանորոգումը կատարվել է 1615-16 թվականներին նշանավոր կրոնական գործիչ Պողոս Մոկացի վարդապետի ձեռքով: Վանական համալիրը, շնորհիվ իր նշանավոր վանահայրերի, մի քանի տասնամյակում հարստացել է նոր շենքերով ու սրբարաններով: 1841 թվականի երկրաշարժը ավերածություններ պատճառեց վանքին, որը վերանորոգվեց 1870-ական թվականներին: 20-րդ դարի սկզբին վանքը լիովին լքվեց և այժմ գտնվում է կիսավեր վիճակում: Ս. Ստեփանոսի վանական համալիրի գլխավոր եկեղեցին միջին չափերի մի շինվածք է, ունի զավիթ և մեկ մուտք:

3 Ս. Ստեփանոս Նախավկայի անունը կրող եկեղեցիներ պատմական Հայաստանի և սփյուռքի տարածքում

ա. Ագարակի (Էգբեկի) Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցի

Ագարակի Ս. Ստեփանոս եկեղեցին գտնվում է Արևմտյան Շիրակում: Կառուցման ստույգ թվականի մասին վկայություններ չկան: Պատերին կատարված արձանագրությունները հիմնականում նվիրատվությունների մասին են, որոնցից հիշարժանը Ապլղարիպ Պահլավունունն է՝ կատարված 1006

թվականին: Դարասկզբի տվյալներով ընդհանուր առմամբ կանգուն վիճակում է: Այս եկեղեցին բավականին ուսումնասիրված է Կարսի նահանգում գտնվելու և ըստ այդմ էլ հետազոտության նպատակով ավելի մատչելի լինելու համար: Եկեղեցին ունի չորս կիսաշրջան խորան և երեք մուտք: Ըստ ուսումնասիրողների, եկեղեցին իր ճարտարապետական կառուցվածքով համապատասխանում է 7-րդ դարի ոճին:

բ. Նոր Ջուղայի Ս. Ստեփանոսի եկեղեցի

Հայաստանի բնակիչների դեպի Պարսկաստան գաղթելու հետ միասին կազմավորվեցին հայկական գաղութներ, դրանցից մեկն էր Նոր Ջուղան: Հոգևոր կյանքի բարեավման հետ միասին կառուցվեցին եկեղեցիներ, որոնց թիվը հասավ 12-ի, դրանցից մեկն էլ Ս. Ստեփանոս եկեղեցին է: Այն քաղաքի հնագույն եկեղեցիներից է, կառուցվել է 1613 թ. և գտնվում է Հակոբջանենց թաղում: Եկեղեցին նորոգվել է 1848 թ.: Եկեղեցու ներսը զարդարված է որմնանկարներով՝ կատարված 1642 թ.:

գ. Երուսաղեմի Ս. Ստեփանոս եկեղեցի

Երուսաղեմի Ս. Ստեփանոս եկեղեցին շատ հին ավանդություն ունի, որը կապված է Ս. Ստեփանոսի նշխարների գյուտի հետ: Նշխարների գյուտը տեղի է ունենում 415 թվականին, Կափարգամաղանում, որը մեծ հանդիսությամբ տեղափոխվում է Սիոնի վերնատուն: 438 թվականին Թեոդոս Բ-ի թագուհին այդ նշխարների մի մասը վերցնում և Ստեփանոսի քարկոծման տեղում եկեղեցի է կառուցում: Նշխարների մնացած մասի վրա մի այլ եկեղեցի է կառուցվում, որի մեծ մասը կործանվում է 614 թ.:

Այնուհետև եկեղեցին հիշատակվում է 670 թվականի մի գրության մեջ, որպես Վերնատան եկեղեցուն կից շինված: 850 թվականի մի հիշատակության մեջ Ս. Ստեփանոսը հիշվում է որպես առանձին եկեղեցի: Եկեղեցին հին ժամանակներից հայկական սեփականություն է եղել և հիշատակվել է մինչև 1970 թ.: Պատմությունը լռում է մինչև 1483 թ.: Ոմն մի Նիկողայոս եպիսկոպոս իր հիշատակարանում գրում է. «Ս. Ստեփանոսի գերեզմանը ի Սիոն»:

Հիշատակելով Ս. Ստեփանոսի նշխարների գյուտը, հարկ եմ համարում մի քանի տեղեկություն էլ հայտնել նրա գերեզմանի մասին: Ս. Ստեփանոսի գերեզմանի մասին հիշում է Ղուկիանոս քահանան 315 թվականին: Երկար դարեր սրբի գերեզմանի տեղը մոռացված էր: 1891 թվականին հնագետների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Երուսաղեմից 21 կմ հեռու գտնվող Բեյթ Ջեմալգյուղը Ղուկիանոսի հիշատակած Կափարգամաղանն է: Նույն գյուղում կատարված հետազոտությունները օգնեցին հայտնաբերելու մի եկեղեցի, որի տակ, այլ գերեզմանների թվում գտնվեց Ս. Ստեփանոսի տապանաքարը, կիսավեր վիճակում:

դ. Աբովյանի Ս. Ստեփանոս եկեղեցի

Աբովյանի Ս. Ստեփանոս եկեղեցին գտնվում է այժմյան Կոտայքի մարզում, Էլար կոչվող գյուղի տեղում: Այն կառուցվել է մոտավորապես 17-րդ դարում: Եկեղեցին բազիլիկ ոճի է: 1851 թվականին վերանորոգվել է, իսկ 1864 թվականին

ավելացվել է նաև զանգակատունը: Եկեղեցու որմերի մեջ պահպանվել են 18-19-րդ դարերի խաչքարեր, որը ցույց է տալիս եկեղեցու հնությունը:

Եկեղեցու հարավային մասում պահպանվել է ուրարտական ժամանակաշրջանի ամրոցի հետքեր: Այստեղ հայտնաբերվել է մի արձանագրություն, որը հավաստում է, թե այդ վայրը եղել է թագավորական ամառանոց: Եկեղեցին, օտնվելով Գեղարդի ճանապարհին, ծառայել է որպես իջևանատուն: Այժմ Աբովյանի Ս. Ստեփանոս եկեղեցին Հայաստանի Հանրապետության տարածքում միակ գործողն է իր անունը կրող եկեղեցիների շարքում:

Արդ, բոլորիս ցանկությունն է, որպեսզի քրիստոնեության առաջին նահատակի անունը կրող նորանոր եկեղեցիներ և սրբատներ գան՝ լրացնելու մեր բազմադարյան մշակույթի կոթողների շարքը, որոնցում չդադարի առ Աստված բարձրացող հայ հավատացյալի խնկելի աղոթքը: